

Արձանագրություն N 4
«ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/22Ծ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«13» նոյեմբերի 2018թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեսրոպյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյան

1. Ստացված փաստաթղթերի մասին

(Կ. Գասպարյան)

12.11.2018թ. ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը, որի համաձայն <<Դուստր Մոնիկա>> ՍՊԸ-ի, <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ի, <<Ճանշին>> ՓԲԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: Նույն եզրակացության համաձայն՝ ՀՀ ՊԵԿ հարկային ծառայությունը հավաստել է, որ վերոգրյալ կազմակերպությունների հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը, ինչպես նաև նույն կազմակերպությունների հայտերը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարները պակաս չեն ներկայացված գնային առաջարկներից:

Մասնակցի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով հրավերով նախատեսված ժամկետներում ներկայացվել են որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնցում գնահատող հանձնաժողովը արձանագրեց ներքոհիշյալ անհամապատասխանությունները, մասնավորապես.


1. <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատելու արդյունքում արձանագրվեց, որ մասնակցի կողմից նմանատիպ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների հանրագումարային ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:
2. <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ի «Աշխատանքային ռեսուրս» որակավորման չափանիշը գնահատելու արդյունքում արձանագրվեց, որ ներկայացված աշխատակիցը՝ Արմեն Ռաֆիկի Ղազարյանը չի հանդիսանում <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ի աշխատակից:
3. <<Դուստր Մոնիկա>> ՍՊԸ-ի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատելու արդյունքում արձանագրվեց, որ մասնակցի կողմից չի ներկայացվել նախորդ երեք հաշվետու տարիներում կատարված նմանատիպ պայմանագիր:
4. <<Դուստր Մոնիկա>> ՍՊԸ-ի «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը գնահատելու արդյունքում արձանագրվեց, որ մասնակցի կողմից չի ներկայացվել կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ իր կողմից սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

5. <<Դուստր Մոնիկա>> ՍՊԸ-ի «Աշխատանքային ռեսուրս» որակավորման չափանիշը գնահատելու արդյունքում արձանագրվեց, որ բացակայում են առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:
6. <<Ճանշին>> ՓԲԸ-ի «Աշխատանքային ռեսուրս» որակավորման չափանիշը գնահատելու արդյունքում արձանագրվեց, որ բացակայում են առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:
- Հաշվի առնելով վերոգրյալ անհամապատասխանությունները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝
1. համաձայն կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 47-րդ կետի՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը,
 2. վերոգրյալ կազմակերպությունների կողմից՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:


Հանձնաժողովի

Նախագահ՝



Ա. Գոսպարյան

Անդամներ՝




Ն. Մեսրոպյան



Ա. Պապյան

Քարտուղար՝



Ա. Պետրոսյան